ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

« ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Դիտարկվող Համաձայնագրի նախագիծը հավանության է արժանացել 2011 թվականի նոյեմբերի 17-ի ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստում:

Նախագիծը կազմելու համար ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվել են 2010 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ մինչև 2015 թվականի ռազմական համագործակցության հայեցակարգով:

Նախագծի ընդունման համար հաշվի է առնվել Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար կադրերի պատրաստման ոլորտում փոխգործակցության հետագա զարգացման պահանջարկը, ինչպես նաև միջազգային համագործակցության հիման վրա դիտարկվող Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի համար բարձր որակավորմամբ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ շահագրգռվածությունը և նպատակադրվածությունը:

Համաձայնագրի նախագծի համապատասխան դրույթներով սահմանվում է Համաձայնագրի նպատակներով օգտագործվող հիմնական հասկացությունները, մասնակից պետությունների զինված ուժերի համար կադրերի պատրաստման ոլորտում փոխգործակցության զարգացման համար մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ համագործակցության նպատակներով իրականացվող միջոցներն ու միջոցառումները:

Ըստ փաստաթղթի դրույթների, Կողմերը զինված ուժերի գիտական և գիտամանկավարժական կադրերի փոխադարձ նպատակային պատրաստումն իրականացնում են մագիստրատուրայում, ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում ստացիոնար և հեռակա ուսուցման ձևերով: Բացի այդ, սահմանվում է Կողմերի զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման բնագավառում համագործակցության զարգացման հիմնական միջոցներն ու ձևերը: Կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ կազմակերպում

են գիտական և գիտամանկավարժական կադրերի ստաժավորում, իրականացնում են մի Կողմի բարձր որակավորմամբ մասնագետների գործուղում դիտարկվող Համաձայնագրի մասնակից այլ պետության ռազմական ուսումնական հաստատություն և կազմակերպություն կրթական ու գիտական գործունեության համար:

Ըստ նախագծի՝ մագիստարատուրայում, ադյունկտուրայում, դոկտորանտուրայում պատրատման կարգը, ժամկետները և կացությունը սահմանվում են դիտարկվող Համաձայնագրի մասնակից ընդունող պետության ազգային օրենսդրությանը համապատասխան և ամրագրվում են կոնտրակտում (պայմանագրում): Դիտարկվող Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը նշանակում են լիազորված մարմին (մարմիններ): Համաձայնագրի իրագործման հարցերով Կողմերի լիազորված մարմիններն անմիջական են փոխգործակցում:

Համաձայնագրի իրագործման ուղղությամբ գործունեության համակարգումը դրվում է ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի վրա:

Դիտարկվող Համաձայնագրի կնքումը բխում է Հայաստանի Հանրապետության շահերից և լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության ռազմավարական շահերին, քանի որ Համաձայնագիրը պայմաններ է ապահովում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական բարձր մակարդակի և որակավորում ունեցող կադրեր պատրաստելու նպատակով:

Հաշվի առնելով վերոնշյալը, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել «ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի համար գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար Ս.ՕՀԱՆՅԱՆ